բին ել և մուտ և ծանօթութիւն բնակութեան լիցի։

ԳԼՈՒԽ Շ.

Ամենայն մարդ ազատապէս կարէ խորհիլ, խօսել և գործել զամենայն զոր ինչ բարի և չար ըստ կամաց և հաճոյից իւրոց, ընդունելով 'ի վերայ իւր վարձ խորհրդեան և բանից բերանոյ և գործոց ձեռաց իւրոց թէ բարոյ և թէ չարի, զամենայն զոր ինչ հատուցում, պատիւ և կամ պատիժ 'ի դատաստանէ մերմէ պարտ է լինիլ 'ի բերմանէ կատարման գործոց բարեաց և չարեաց ըստ արժանաւորութեան բարոյ և չարին իւրաքանչիւր անձանց։

ԳԼՈՒԽ ՇԱ.

Որովհետև իշխանք աշխարհին մերոյ լինելոց է ընտրեցեալ 'ի ժողովրդենէ զաւառաց աշխարհէն մերմէ, որպէս գլուխ 14. յօրէնս, և իւրաքանչ ոք ունին ռոճիկս տարեկանս 'ի առաքօղէ իւրմէ իբրև 3000 դահեկան, վասնորոյ 'ի գլուխ 278, յօրէնս նշանաւորեալ ռոճիկս պաշտօնատարաց մերոց, ով ոք որ լինիցի յաւել արժանի քան զ3000 դահեկան, զոր ինչ յաւելորդն 'ի տանէն հայոց հատուցանի, և ումեք արժանաւորութիւնն պաշտօնի պակասագոյն ռոճիկ քանթէ 3000 դահեկանս, զամենայն զոր ինչ յա-